



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԳԵՂԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆԻ

ԵՐԶԱՐԱՐԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 30

4/17 Փետրուար 1912

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԻ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏԵՐԱՐՔԱՐԱՆԻ

ԵՆ ԵՆ
ԵՆ ԵՆ
ՏՈՒՐԻՆ
ԿԵՆԵՐ

«ԿԱՌՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ», Հայ կաթողիկէ Պատրիարքարանի պաշտօնական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ լրացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյց ամէն յուրերն՝ համառօտուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերքեր կարդալու:

ԲԱՃԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ

Թուրքիոյ համար.

Տարեկան. Դիեկ. արժ. 40

Վեցամսեայ » » 20

Արսասահման.

Տարեկան. Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին

Մէկ թիւ 1 Դահեկան

Նամակ, յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցիին.

ԿԱՌՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ.

Պատրիարքարան կաթողիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Arm. Catholique

Péra

Constantinople

ԾԱՆՈԹ. 1 — Ահլ-է-Նի կը հրատարակուի Շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:

3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:

5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ Տարի	4/17 Փետրուար 1912	Թիւ 30
--------------	--------------------	--------

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԷ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՍՏԱՏԵՍԱԷ Ի ՍՈՒՐԲ ԳԱՀԷՆ ՀՌՈՎՄԱՅ

Սիրեցեալ Որդւոց Մերոց ի Քրիստոս Գեւ. Գեւ. վարդապետաց եւ սիրեցեալ ժողովրդեան ողջոյն եւ Աստուածաւանդ օրհնութիւն.

Ահա ամիս մ'է որ հասած ենք Հոռոմէն Սրբազան Քահանայապետին քովէն մեր Առաւուծապա՛հ Աթոռը եւ մեր հայրական խնամոյց յանձնուած հօտին քով: Արդէն լսած էք ամէնքնիդ ալ Մեր անձին դէմ եղած աւարդանքները եւ Մեզի դէմ գրուած այնչափ նախաստական խօսքերը: Լաւ գիտենք ինչպէս չաա մը թեմերէն Մեզի ցաւակցութեան նամակներ եւ հեռագիրներ եկան որ մեր ամբողջ ժողովուրդը ցաւ կը յայտնէ եղած

բաներու վրայ և մեծ մխիթարութեամբ կը դիտենք որ Հայ-Ուղղափառ ժողովրդեան ամբողջութիւնը Հռոմայ Սուրբ Եկեղեցւոյ և ասոր անսխալ գլխոյն հնազանդ և սնոր կապուած են և Հռոմէն ճանչցուած հոգեւոր պետերու հետ միացած են: Կը լսենք որ Սրբազան Քահանայապետին մեր հասարակութեան ուղղած այն հանրական նամակն ամէն տեղ յարգութեամբ ու սիրով ընդունուած և կարգացուած է. վերջապէս կը տեսնենք մեր հասարակութեան մէջ ուղղափառ Ս. Հաւատքը արմատացած և շատ մը թեմերէն գոհունակութեան և շնորհակալութեան նամակներ եկած են իրենց համար Ս. Քահանայապետին կողմանէ ընտրուած եպիսկոպոսներու աւթիւ, և տաա այս է ճշմարիտ ուղղափառ ժողովրդեան նշանը, այսինքն կատարեալ և անպայման հնազանդութիւն առ Սուրբ Քահանայապետն մեր: Ոյր վասն ի բոլոր սրտէ ուրախ եմք և փառք կու տանք Աստուծոյ:

Աստուծոյ սիրեցեալ ժողովուրդ, հոս ի Պոլիս ոմանցմէ շատ նախա-աինքներ կ'ընդունինք և կը հանդուրժենք ի սէր մեր սուրբ Հաւատոյ, ի սէր մեր Եկեղեցւոյ բարեկարգական կանոնաց որոնք սերտ յարաբերու-թիւն ունին վարդապետական ճշմարտութեանց հետ, և բնաւ չենք վհա-տիր այսպիսի ցոյցերէ: Նախ կը մտածենք թէ այս ամէնը կը քաշենք մեր սուրբ Կրօնքի սիրոյն համար, երկրորդ է կ'իմանանք որ Մեզի այս նախատինքն ընող անձանց շատերը մեզմէ չեն և մնացածներն ալ շատ խաբուած են և առանց գիտնալու կը նախատին զմեզ, իրենց հոգեւոր պետը, իրենց հովիւը, որով կը յուսանք որ Աստուած ամենաբարին ա-մէնուն պիտի ներէ և օր մը պիտի տեսնեն ճշմարտութիւնը: Ահա ասոր համար գիշեր ցորեկ կ'աղօթենք Աստուծոյ, Սուրբ պատարագներու մէջ կը յիշենք Մեր սիրելի ժողովուրդը և ամէն կիրակի և աօնի օրեր ամէ-նուն համար սուրբ զոհը կը մատուցանենք որպէս զի մէկու մը հոգին չը կորսուի և մեր հասարակութիւնը հաստատ մնայ Սուրբ և Հոգւմէական Եկեղեցւոյ միութեան մէջ:

Նոյն այս նպատակաւ ուղեցինք գումարել Ազգային Պատրիարքա-կան Սինոդը, զոր շնորհիւ Բարձրելոյն յաջողութեամբ ի գլուխ հանեցինք. նոյն նպատակաւ ևս ուղղուեցան Ձեզի Սինոդոսական Հարց կրկին կա-ռավարական թուղթերը: Արդեօք հարկ է, սիրեցեալ որդեակք, յիշեցնել Ձեզի որ Մեր և Արհ. Սինոդական Հարց Ձեր ճշմարիտ բարեոյն համար ի գործ դրած այս ամէն ջանքերը և հայրական յորդորները բաւական չպիտի ըլլան Ձեզի համար անակնկալ բարիքները արդիւնաւորելու: Եթէ երբեք դուք անոնցմէ չուզէք օգտուիլ: Այո՛, սիրեցեալ որդեակք, առ այդ Ձեր ալ բարի տրամադրութիւնը անհրաժեշտ է, չէ՛՝ բաւական չէ՛ կաթողիկէ անուամբ միայն պարծնալ, այլ կաթողիկէի մը վայել գործ-քերով է որ պիտի կարենաք իրաւամբ նոյն անուամբ պանծալ. Յիսուսի մեր երկնաւոր վարդապետին խօսքն է, «Ոչ ամենայն որ ասէ՝ ցիւ Տէր

Տէր, մացէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է (Մատթ. է. 21.)»։ Այո՛, մեր անուան համապատասխանող գործ պէտք է։ Միթէ կարելի՞ է տարակուսիլ որ Կաթողիկէ Եկեղեցւոյ հարազատ զաւկի մը առաջին պարտքն է լսել նոյն եկեղեցւոյ Աստուածային հիմնադրին Քրիստոսի ձայնը և անոր հպատակիլ, իսկ Քրիստոս Ձեր հոգեւոր առաջնորդներուն բերնովն է որ կը խօսի Ձեզի։ «Որ Ձեզ լսէ ինձ լսէ»։ Եւ ահա ասոնք վերնշնակեալ իրենց կրկին նամակներովը կը խօսին Ձեզի, սիրեցեալ որդեակք, ժամանակէ մը ի վեր ազգային կարծեցեալ իրաւանց քողին տակ մեր Սուրբ Եկեղեցւոյ և փոքրիկ հասարակութեան կենսական իրաւանց դէմ մղուած վտանգաւոր պայքարի առթիւ, կարդացէ՛ք ուրեմն կարդացէ՛ք մտադրութեամբ այդ նամակները, որ ներկայ պայքարի առարկայ եղած են, հոն պիտի տեսնաք մեր Ս. Եկեղեցւոյ բացայայտ ու անյեղլի սկզբունքները, որոնց դէմ գիտակցաբար կամ անգիտակցաբար պայքար կը մղուի։ Նոյն այդ պայքարը որչափ ալ ապօրինի և վնասակար է Հայ Կաթողիկէ հասարակութեան՝ նոյնչափ և շատ աւելի զարմանալի կը գրտնանք զայն առաջ մղող անձանց հակասական ընթացքը։ Կարելի՞ է արդարեւ երեւակայիլ զոր օրինակ վաճառականական ընկերութեան մը անդամներ, որոնք այն ընկերութեան պատկանած ըլլալն իրենց փառք համարելով հակառակ են այն սկզբունքներուն, որոնցմով կը կառավարուի և կը զարգանայ նոյն ընկերութիւնը, բայց առաջ երեւակայելը իսկ կարելի չեղած այս հակասական ընթացքը այսօր արդեամբ կը դիտենք մեր տիրելի հասարակութեան պատկանող մէկ մասին մէջ։ ասոնք շարունակ կ'ըսեն ու կը կրկնեն. մենք կաթողիկէ ենք և կաթողիկէ պիտի մնանք։ յայտարարութիւն մը որ ըստ ինքեան իրենց կրօնակից եղբարց և ի մասնաւորի մեզ հոգեւորական պետերուս մէջ ուրախութիւն պատճառելէ զատ, կը յայտնէ որ այդ յայտարարութիւնը ընդունելը իրենց համար փառք կը համարին Կաթողիկէ Եկեղեցւոյ պատկանած ըլլալնին։ Եթէ այսպէս է, ըսէք ուրեմն, սիրեցեալ որդեակք, ինչպէ՞ս կարելի է որ նոյն Կաթողիկէ Եկեղեցւոյ այդ Աստուածային ընկերութեան անյեղլի սկզբանց և բարեկարգական կանոնաց դէմ մաքառիլ կ'ուզուի, մինչդեռ զսոնք պաշտպանելու համար մեզ հետ նախանձախնդիր ախոյեաններ հանդիսանալու էք, լաւ գիտնալով որ մեր և ձեր սիրած Կաթողիկէութիւնը անոնցմով միայն հաստատուն մնացած է և կը մնայ և պիտի մնայ։

Այո՛, առ այս եթէ հարկ ըլլայ, ամէն զոհողութիւններու ալ պատրաստ ըլլալու ենք, ո՞վ չգիտեր թէ մարդիկ որչափ ծանր զոհողութիւններ ենք ընդունելու կ'ենթարկեն զիրենք ժամանակաւոր բարոյական և նիւթական բարիքներ ձեռք բերելու և անոնց պահպանութիւնը ապահովցնելու համար, նոյն իսկ չկա՞ն այնպիսիներ որ այս նպատակաւ իրենց առող-

ջութիւնը, կեանքերնին և ամէն աշխարհական բարեքնին իսկ վտանգի կ'ենթարկեն: Բայց միթէ ամէն ժամանակաւոր բարեքներ, մինչև իսկ մեր կեանքը զոհելու պարտական չենք ի պաշտպանութիւն մեր Ս. Հաւատքին:

Ահա ներկայիս ալ մեր բոլոր տրամադրութիւններն են ի պաշտպանութիւն Ս. Եկեղեցւոյ օրինաց, սրոնց անթերի գործադրութեամբ միայն կարող պիտի ըլլանք Ս. Հաւատքնիս անաղարտ պահելու: Ահա մեր հասարակութեան այս կենսական բարւոյն համար է որ մենք կ'ընդդիմանանք այնպիսի ապօրինի պահանջմանց դէմ: Ու եթէ տեղի առ կարելի ըլլար, ամենայն սիրով կը զոհէինք ամէն բան, քանի որ մենք զՄեզ ուրանալով և ամէն բանէ զրկելով քահանայութեան ատօրձանը ընդունած ենք և Յիսուսի աշակերտ եղած ենք: Սակայն ապահով ենք որ օր մը զՄեզ պարտաւ տեղ նախատողները և անպատուողները պիտի ճանչնան արդարութիւնը. և օր մը խաղաղութիւնը պիտի տիրէ և մենք ա զբաղելով մեր հոգեւոր պաշտօնին գործերով՝ պիտի ձեռնարկենք մեր սիրելի ժողովրդեան օգտակար ծառայութեան և ապահով ենք որ Աստուծոյ պիտի օրհնէ Մեր ամէն գործերը:

Ուրեմն սիրեցեալ որդեակք, հաստատուն կեցէ՛ք ձեր հաւատքով մէջ. եկեղեցւոյ թշնամիք կամ անտարբերներն այս վերոյիշեալ բաները հաւատոյ մաս չեն ըսելով՝ կրնան խաբել պարզամիտները. մի՛ խաբուիք կ'աղաչենք ձեզի Յիսուսի սիրոյն համար, Մեզմէ անկարելի բաներ մի պահանջէք, Մենք չենք կրնար վտանգի մէջ դնել ձեր և Մեր հոգւոց փրկութիւնը. ձեզի համար կեանքերնիս և արիւննիս տալու պատրաստ ենք, բայց եկեղեցական օրինաց դէմ չենք կրնար գործել ըսաւ, սկըզբունքներէ չենք կրնար չեղիլ: Դուք լաւ գիտէք, ո՛վ որ իր օրինաւոր եպիսկոպոսին, իր հոգեւոր հովուին հակառակի՝ Յիսուսի Քրիստոսի հակառակ կեցած կ'ըլլայ, Աւետարանի այս խօսքին համաձայն «Որ ձեզ լսէ ինձ լսէ, որ զձեզ անարգէ զիս անարգէ»: Ուրեմն հետեւեցէ՛ք Սրբազան Քահանայապետի հրամանին, ինքն հրաման ըրաւ ձեզի իր վերջին նամակովն որ Ձեր Կ. Պատրիարքին և եպիսկոպոսաց հնազանդիք և այս հնազանդութեան դէմ դնողները անշուշտ ծանր կը մեղանչեն և զիրենք մեծ վտանգներու կ'ենթարկեն: Կը խնդրենք որ սուրբ և բարի անձինք աղօթին մեր դիտաւորութեան համար, իսկ մենք կը շարունակենք աղօթելու ձեր ամէնուն համար ամէն օր. կը ներենք նորանոր անարգանաց, ամէնքը կը սիրենք և ամէնուն փրկութեան համակուլուն փափաքով կ'օրհնենք զամէնքնիդ ալ և կը մաղթենք ձեզի այս աշխարհիս մէջ ամէն տեսակ բարօրութիւն և ի հանդերձեւմն երջանիկ յաւիտեանականութիւն մը:

Տուեալ ի կաթողիկոսարանէս որ ի Բերա Կ. Պոլսոյ

ի 15 փետրուարի ն. տ. 1912.



ԿԱՐԴԻՆԱԼԱԺՈՂՈՎԸ (Consistoire)

(Շարունակութիւն*)

2. Գրած էինք մեր 25 թղթովն մէջ թէ երկրորդ Կարդինալափոշովն՝ ծիրանի զլլարիկի (Barrette rouge) կոչուածն է, որ՝ ըստ սովորութեան, տեղի ունեցաւ չորեքշաբթի օր, 29 նոյեմբեր Վատիկանու Աւրա Գօնչիսթօրիալէ՝ յորջորջուած դահլիճին մէջ, ուր մասաւ Սրբազան Հայրն իր հետեւորդներով ի ժամ 3 ու կէս յետ միջօրէի:

Ս. Քահանայապետը բազմեկէն վերջը, Արարողապետը մի առ մի հրաւիրեց նոր Կարդինալները երկցութեան կարգաւ, որոնք սովորական երեք ծնրադրութիւններն ընելով, և քահանայապետական զահուն առջև ծնկի գալով Նորին Սրբազնութեան ոտքը կը համբուրէին, որ անոնց գլուխը կը դնէր կարմիր գլխարկն և ուսերնուն վրայ Կարդինալական ծիրանին: Յետոյ նոր Կարդինալները ոտք ելլելով, գլուխն կը բանային և Քահանայապետին աջը կը համբուրէին և խորին խոնարհութենէ մը վերջը զահուն մօտ շարուած նստարանները կու գային: Երբ ամէնուն վրայ այս արարողութիւնը լրացաւ, նստան քանի մը վայրկեան. և Արարողապետին մէկ նշանին, ոտք ելան և կիսաբոլոր շարուեցան Ս. Պապին դիմացը. և իրենց Երկցադոյնը՝ Կարդինալ Ֆալգանիօ, յանուն իր ընկերաց ևս, արստասանեց ճառ մը, յորում Նորին Սրբութեան զահոյից առջև կը դնէր խորին յարգանաց և շնորհապարտ զգացմանց հաւատարիքը՝ իրենց եղած այս մեծ շնորհին համար, որ արուած էր իրենց ոչ վասն արժանեաց, այլ բարեացակամութեամբ Քահանայապետին, որուն փոխարէն կ'ընծայէին իրենց խոնարհ գործունէութիւնը, լաւ հասկցած ըլլալով այս պատուոյն ահեղ պատասխանատուութիւնը, ի մասին պաշտպանութեան Եկեղեցւոյն Յիսուսի Քրիստոսի: Քահանայապետին համար մաղթանքներ ընելով, յօգուտ եկեղեցւոյ իր թանկագին մեծագործութիւններն յիշելէ վերջը, կը յաւելուր թէ՝ ըստ իրենց պարտուց, իրենք ալ պիտի ըլլան Իրեն գործակիցները և իրենց վրայ դրուած յոյսն ու վստահութիւնը ի դերս պիտի չհանեն: Այս խոստումը ծառայական յարգանք մը կամ կեղծ ու պատիւր ցոյց մը չէ. այլ ինքնայօժար բղխումն է իրենց սրտերուն խորքէն, համազուած ըլլալով որ նա Ս. Պետրոսի օրինակոր յաջորդն է, Եկեղեցւոյ գերագոյն Հովիւը, Յիսուսի Քրիստոսի փո-

* Տե՛ս Արձագանգ, Ա. տարի թիւ 25, էջ՝ 304: Այս ընդհատուած յօդուածը իր մասնաւոր շահեկանութեանը համար կը շարունակենք:

խանորդը: Ուստի, Աստուծոյ օգնականութեամբ միշտ և հանապազ հլու-
թեամբ պիտի հետեւին Անոր խորհուրդներուն. միշտ պատրաստակամ
Անոր վարդապետութիւնները պաշտպանելու, վասն զի անոնք մեր Աստ-
ուածային փրկին սորվեցուցածները իցոյց կը բերեն իբրեւ ի հայելւոջ:
Եւ Ս. Եկեղեցւոյ սրբազնասուրբ իրաւունքները անվճար պաշտպանելու
համար Անոր կողքին պիտի կենան խառնուած անվեհեր: Այս առաջա-
դրութեանց վրայ հաստատուն մնալու համար, թախանձանօք խնդրեց
կարդինալն իրեն և իր ընկերաց վրայ Առաքելական Օրհնութիւնը:

Սրբազան Հայրն ոտքի վրայ ելաւ, ու բարեհաճեցաւ յոյժ զեղեցիկ
ճառով մը պատասխանել, զոր հոս թարգմանելով կը զենենք.

«Շնորհակալ եմ, Տէր կարդինալ. այն զգացումներու համար զորոնք
յանուն Զեր եղբայրակիցներուն յայտնեցիք ինձ՝ բարձր արժանապատուու-
թեան համար որուն բարձրացաք: Իսկ ես պետք է որ յայտնեմ ձեզ իմ
գոհունակութիւնս՝ կոչելուս համար զձեզ ի մասնակցութիւն Առաքելական
Ժողովոյն վսեմաշուք Աւագորերոյ, որոնց բարեպաշտութեանց, եռանդ-
եան եւ գիտութեան բարեմասնութիւնները քաջ կը ճանչնամ: Աւագորեար
որ այլեայլ պաշտօններու մէջ չքնաղ ծառայութիւններ մատուցին Եկե-
ղեցւոյ, եւ ամենքն ալ զովելի հանդիսայած են այն լուսամիտ յարումով
զոր կը տածեն այս առաքելական Ս. Աթոռոյս: Ուստի կը շնորհաւորեմ
զձեզ, սիրեցեալ որդեակք իմ, ո՛չ միայն սուրբ Ծիրանոյն համար որով
զարդարուեցաք, այլ, եւս առաւել, նորարժանեաց համար, զորս պիտի
շահիք Յիսուսի Քրիստոսի փախանորդին օգնելով ի վարչութեան Եկե-
ղեցւոյ՝ այնչափ պիտոյից մէջ որ այսօր աւելի սաստիկ կերպով զգալի
կ'ցլան ժամանակներու ծանրածոփր պայմաններուն, եւ անդադար ու
կատաղի յարձակումներուն պատճառաւ, որոնց նշաւակ կ'ըլլայ Հռովմայ
Քաջանալապետութիւնը իր թշնամեաց կողմանէ:

«Քանզի ես ստոյգ եմ որ ամենքդ ալ համոզուած եք թէ այս նոր
արժանապատուութիւնը Զեզմէ գոհողութիւններ պիտի պահանջէ: Այս
առիթիւ հարկ չէ որ Զեզի կրկնեմ այն պատասխանը՝ զոր, ինչպէս այս
առիթուան Աւետարանին մէջ կարդացինք, Աստուածային փրկիչը տուաւ
Մկրտչին երկու աշակերտաց որոնք կը հարցնէին թէ ո՛ր կը բնակէր.
Եկե՛ք ու տեսե՛ք. «Եկա՛յք եւ տեսե՛ք.» որովհետեւ դուք լաւ կը ճանչնաք
Յիսուսի Քրիստոսի փախանորդին թէ՛ բնակութիւնը եւ թէ՛ թշուառ վի-
ճակը: Եւ զայս կը լիշեմ՝ ո՛չ թէ դեպ առ իսկ ձեր կարեկցութիւնը զբոգ-
ուելու համար, այլ զձեզ հառտատելու համար այն համոզման մէջ թէ
մանաւանդ ներկայ ժամանակներու մէջ սուրբ Ծիրանին խորհրդանշան է
ցաւոց, վշտաց եւ գոհողութեան որոց պիտի համբերէք, երբ հարկ ըլլայ,
ճշմարտութեան եւ արդարութեան յաղթանակին համար, մինչեւ ցնէղումն
իսկ արեան: Եւ՛ր՝ սարսափիք սակայն. քանզի մեզի այս բանս յառաջա-

գոյն ըսաւ Քրիստոս թէ իր եկեղեցին պիտի հալածուի. եւ մեզի համար վստօք սեպուելու է՝ մեր Աստուածային Փրկչին վերքերուն նշանները կրելը: «Եթէ աշխարհ զձեզ կ'ասէ, կ'ըսէ Քրիստոս, գիտցե՛ք որ ձեզմէ առաջ զիս ատեց: Յիշեցե՛ք այն խօսքը զոր ըսի ձեզ. չկայ փառայ մը իր տիրոջմէն տուելի մեծ, Եթէ զիս հալածեցին, պիտի հալածեն նաեւ զձեզ: Այս աշխարհիս վրայ նեղութիւն պիտի ունենար, բայց քաջալերուեցէք, զի եռ յաղթեցի աշխարհի:» Այս յաղթութեան վրայ կ'ապահովեցնէ զմեզ Քրիստոսի խօսքը՝ որ կը պահպանէ ու կը պաշտպանէ իր Հարսը՝ եկեղեցին, եւ Եսայեայ խօսքերուն հետ կը կրկնէ անոր. Ազգս Լեւիտականի որ թեղ ու Ժառանգեալն է՝ Կորնթեոս. բայց դու պիտի տեսնես մինչեւ աշխարհիս վերջը. Ահա—ասի՛կ եւ ընդ Յեզ եւ Կաթնայն առ—բռնեալն է Կաթնայն աշխարհի: Այսու հանդերձ նաեւ փութութեանց մեջ պիտի չպակսին ձեզ մխրալութիւններ. Պիտի ունենանք միշտ այն մխրալութիւնը զոր մարդ կը զգայ բարիք ըրած ատեն, իր պարտքը կատարած ատեն, իսկ գերագոյն պիտի ըլլայ Քրիստոսի հետ վարձատրութիւնը. ապահով ըլլալով յաւիտենական վարձուց նախասահմանութեան՝ կերպարանակից ըլլալով պատկերի Որդւոյն Աստուծոյ, Մխրալութեցե՛ք ուրեմն, սիրելի որդեակք, որ մինչեւ հիմա իմ մօտս աշխատեցար, ապա կանատես վկայք թէ՛ իմ սփոփանքներուն թէ իմ դառնութեանցս, եւ ընդունեցէք Աստուծոյ ձեռքերէն՝ ի մեծ մխրալութիւն իմ եւ ձեր, այն զուարթամիտ խնդութեան ցոյցերն զորս ձեզ ըրին ձեր քաղաքացիներն, բարեկամներն եւ ձեր կատարած փափուկ պաշտամանց աշխատակիցներն, եւ սփոփե զձեզ մտածումն այն վարձուց որ կը սպասէ ձեզի անկեց վերջն ալ եկեղեցւոյ ձեր մատուցանելիք կարեւոր ծառայութեանն համար:

«Մխրալութեցե՛ք, ո՛վ Անգղիացի եւ Հոլանտացի սիրեցեալ որդեակներս. որովհետեւ կարդինալութեան ձեր բարձրացման համար ձեր ազգայիններու սուրբ ուրախութեանը մեջ ի յայտ եկան այն կենդանի հաւատքը, որով ոգեւորեալ են կաթողիկէայք, եւ ինչպէս որ ձեր՝ այսպէս իմ սիրտս ալ կը բացուի քաղցր յուսոյ թէ անոնց օրինակը պիտի ազգէ միւս ամենուն ալ ի ծոց եկեղեցւոյ երջանիկ դարձին վրայ:

«Եւ այս յոյսը ամենաքաղցր կերպով կը ծախի ինձ ձեր առջեւ՝ որ եկե՛ք հեռաւոր Ամերիկայէն, Խանդավառութիւնն որով ընդունուեցաւ ձեր՝ սուրբ Ծիւանոյ բարձրացման յուրը, ցոյցերն որ ձեզի եղան քաղաքացեաց ամեն դասակարգերէն, մաղթանքներն եւ օրհնութիւնները, շնորհաւորութիւններն ու սիրալիք ողջոյններն երբ կը բաժնուէիք Նիւ Եօրքէն եւ Պոսթընէն, եւ վերջապէս լաղրական ճանապարհորդութիւնն Ովկէանու վրայ, պաշտպանուած Քահանայապետական Դոօշէն, ինձ կ'ազդեն ո՛չ միայն յոյս ալ եւ ստուգութիւն՝ որ Աստուած ձեր դարձին պիտի բազմապատկէ ձեր առաքելութեան պտուղները, եւ այդ հիւրընկալ

Եւ ասպնջական երկրին վրայ՝ որ կ'ընդունի աշխարհիս ամեն ժողովուրդները, եւ լաւ իմացուած ազատութեամբ կը խնամէ հասարակաց բարիքը, պիտի բազաւորէ Տէրը եւ անոր մէջ պիտի փայլի Անոր վառքը. «Ի՜նչ Տէր յայտնեսցի, եւ քանի Նորա ի ինչ եղեւեսցեն»:

«Իսկ ձեզ ի՜նչ պիտի ըսեմ, ո՛վ սիրեցեալ սրղիքդ Գաղղիոյ, որ կը հեծէր հալածանաց բեռան տակը: Այն ժողովուրդը որ դաշինք կուէց Աստուծոյ հետ Ռեմսի մկրտութեան աւագանին վրայ, զղջացեալ պիտի վերադառնայ իւր նախկին կոջման: Աբժանիքն այնքան զաւակաց՝ որք զրեքէ բոլոր աշխարհիս վրայ կը բարսգեն Աւետարանի ճշմարտութիւնը եւ որոնց շատերը զայն կրեցին իրենց արխանով. — Աղօրքներն այնչափ սուրբերու՝ որոնք կը ցանկան ու տենջան երկնաւոր փառաց մէջ ընկեր ունենալու իրենց հայրենիքի սիրելի եղբայրները. — առատամեռն Աստուածապաշտութիւնը այնչափ որդւոց՝ որոնք նաեւ մեծ զոհաբերութեան զնով կը պահպանեն կղերին պատիւը եւ կարողիկէ պաշտաման շրեղութիւնը. — եւ մանաւանդ հեծութիւններն այնքան մանուկներու, որոնք տապանակներու առջեւ կը զեղուն իրենց հոգին այն բացատրութիւններով զորս ինք իսկ Աստուած կը դնէ անոնց շրթոցը վրայ. սուրբապէս Աստուածային զթութիւնն ու ողորմութիւնը պիտի հրաւիրեն այս ազգին վրայ: Յանցանքները անպատիւ չպիտի մնան. բայց ամենեւին պիտի չը կորսուի այնքան արժանիքներու, այնչափ հառաջադրութեան եւ այնչափ արցունքներու դուստրը: Պիտի գայ օր մը, եւ յուսմբ ոչ շատ հեռու, յորում Գաղղիա, ինչպէս Սաղոս Դամասկոսի նամբուն վրայ, երկնազեղ լուսով մը պիտի շրջապատի, ու պիտի լսէ ձայն մը որ պիտի կրկնէ իրեն. Ո՛վ դուստր, զիս ի՜նչու կը հալածես: Եւ երբ ինքն պատախան տայ՝ Ո՛վ ես, Տէր, ձայնը պիտի աւելց եւ եւ եմ Յիսուս զոր դու կը հալածես. խիստ բան է քեզի խրանին դէմ արացել. վասն զի քու յամառութեամբդ ինքզինքդ կը կտրժանես: Եւ անիկա դողալով եւ ապշահար պիտի ըսէ. Տէր, ի՜նչ կ'ուրես որ ես ընեմ: Եւ Նա. Ն՛վ ոտքի վրայ. լուացուէ՛ զքեզ պղծող աղօղութիւններէն. արբնցուր ծոցիդ մէջ թմրած զգացումներն ու մեր դաշինքին պայմանները եւ զնա՛, ո՛վ անդրանկուհիդ Եկեղեցւոյ, ո՛վ նախաւահմանեալ ազգ, ո՛վ անօր ընտրութեան, տանելու՝ ինչպէս յանցելումն, իմ անուան առաջի ժողովրդոց եւ բազաւորաց երկրի:

«Եւ այս ամենաբաղդը մաղբանքով ի խորոց սրտէ կը շնորհեմ Առաքելական օրհնութիւնը Ձեզ տմենուդ, սիրեցեալ որդեակք, ձեր քեմերուն կղերին եւ ժողովրդեան, ձեր կրօնաւորական հասարակութեանց, սիրելի հաւատացելոց որք իրենց ներկայութեամբ պճնազարգեցին այս ծիսակատարութիւնը. ձեռ եւ անոնց ազգականներուն, եւ այս օրհնութիւնը աղբերակն ըլլայ ամենուդ համար, ընտիր ընտիր շնորհներու եւ ամենաբաղդը մխիթարութիւններու»:

(Շարունակելի)

Թիւ 5996

Տէր

Մեր Կ. Պատրիարքարանի պատշոնական բերքն, «ԿԱԹՈՂԻԿԷ ՍՐՁԱԳԱՆԳ»ը, Տեառն յաջողելով, սկսաւ հրատարակուիլ ի Կ. Պոլիս, աւելի մեծ ծաւալով ու ճոխ բովանդակութեամբ, ինչպէս տեսաք Ձեզի դրկուած քիւերէն: Կարողիկէ Ս. Կրօնիս համար Ձեր տաճած սէրն ու եռանդը խաղ գիտնալով, ներկայիս կը խնդրենք որ հանրի բարունակել Ձեր բաժանորդագրութիւնը եւ ծանօթացնել Ձեր շուրջը որպէս զի այս օգտակար բերքը կարելի եղածին չափ տարածուելով, սպասուած օգուտն ու նպատակն արդիւնաւորի:

Եւ հաւատե՛տք սիրոյ եմք

Տեառնդ

Աղօթարար

Կ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԴ. ԹԷՐԱՅԱՆ

Կ Պտրք. Տանն Կիլիկիոյ

The first of these is the fact that the
 number of people who are employed in the
 service of the government is increasing
 rapidly. This is due to the fact that the
 government is expanding its activities
 in many fields, and is therefore
 requiring more personnel to carry out
 its functions. This is particularly true
 in the case of the armed forces, which
 are being expanded to meet the needs
 of the country.

The second

The third

The fourth

ՄԱԿԴԻՐՆԵՐՈՎ ՊԵՏՔ ԶԷ ԽԱՂԱԼ

Ա. Տրամաբանութեան պակասութիւնը շատ զարմանալի հակասութիւններ կը ծնանի: Անոնք որ ամիսներէ ի վեր ամէն ապօրինաւոր ու ցաւալի միջոցներով կը մաքաւին Կ. Պատրիարքի օրինաւոր իշխանութեան դէմ, կը նախատեն այդ իշխանութիւնը յարգողները. կ'անարգեն հոգւաւոր Հովութիւն ջատագով կեցողները, մեր եկեղեցիներու սրբութեան պաշտպան կանգնողները, կ'անարգեն զանոնք իբրեւ Բեռնակէր, Դանապան, արհեստագործ եւ իբրեւ անարժէք եւ ոչինչ հարդէլ: Յիշաւի զարմանալի չէ՞ այդ:

Եթէ իբրեւ ճշմարիտ քրիստոնէայ կը տրամաբանեն, պէտք է մտածելին որ Քրիստոս Տէրն մեր, Աստուծոյ Որդին, Թագաւորն թագաւորաց եւ Տէրն տէրանց, իրեն իբր ընկեր եւ աշակերտ եւ Բարեկամ ընտրեց եւ ունեցաւ Յինարաններ, հախաւորներ, անպահաճի արհեստագործներ, յեղիորդ հարդէլներ, իր Հօր փոքրիկը, որոնց իր երկնաւոր Հայրը տուաւ Արքայութեան ժառանգութիւնը, եւ զինքը ծածկելով «խմաստուններէն ու զի առնաներէն», յայտնեց այս պարզամիտներուն, այս «տղայաց», երանի տալով անոնց: Ընդհակառակն նոյն Քրիստոս, Տէրն Դեր, ողբալով ողբաց հպարտ ինքնահաւաններուն վիճակը, որոնք Աստուծոյ եւ եկեղեցւոյ օրէնքները կը քամահրեն կ'ոտնակոխեն. «Վա՛յ ձեզ մեծատանց»: Եւ իր Առաքեալը, Անոթն ընտրութեան, հոգւով սրբով ներշնչուած, կը սորվեցնէր, թէ ամենեւին «խախտ չկայ» քրիստոնէից մէջ, ոչ ազնուականի ոչ բարբարոսի, «ա՛յ ծառայի եւ ոչ աշակերտ», եւ կ'ազաղակէր. «Ո՛վ եղբարք, զիտէք ձեր կոչումը, զի ձեզմէ շատերը ըստ մարմնոյ եւ ըստ աշխարհի իմաստաւորներ չեն, զօրաւորներ չեն, ազնուականներ չեն. այլ աշխարհիս յիմարներն ընտրեց Աստուած, որպէս զի ահա՞նք իմաստաւորներ, եւ աշխարհիս տկարներն ընտրեց Աստուած, որպէս զի ահա՞նք զօրաւորները. եւ աշխարհիս անպահաճները, արհամարհանալիներն ընտրեց Աստուած, եւ ՈՉԻՆՉՆԵՐԸ ընտրեց, որպէս զի Բան հը կարծողները խափանէ. որպէս զի ով որ կը պարծի, ի Տէր պարծեսցի» (Ա. Կոր. ա.): Ահա Քրիստոնեայ մը այսպէս կը մտածէ: Եւ իրաւամբ է որ կ'ըսէ Առաքեալը՝ «Բան հը կարծողները» (չէսիմն.'): վասն զի վերջապէս իրենք ինչ են. ո՞ր հնադարեան ազնուականութիւն, (եթէ բան մըն է.'): կը պնէ՞ զիրենք. իրենք ալ արհեստաւոր, թռչակաւոր չեն միթէ. շատերը քանի մը տարի առաջ քանի դահեկան ամսականով կը ծաղայէին. շատերը Բեռ-

նախնիներո՞ւ, արհեստագործներո՞ւ զաւակներ չեն... եթէ այդ ամօթ մըն է: Եւ կրնայ աւելցուիլ թէ ազնուական կարծուողներուն մէջ երբեմն որպիսի բարոյական անկումներ... կան, մինչդեռ այդ ոչինչ կարծուող ընտանիքներն են որ քրիստոնէական կենաց սրբութիւնը անկողծ և անսրատ կը պահպանեն: Բաց աստի, պէտք չէ մոռնալ որ այս մեծիրը, ինքնահաւանները որ «զաչա իւրեանց կախուցին», դատաւարտած է Տէր Հոսանելու, չլսելու, և չիմանալու... (երանի՛ թէ դառնային ու բժշկուէին Մատթ. ԺԳ. 15). և անոնց իմաստութիւնն ու խորհուրդները կ'արհամարէ Աստուած և կը ցրուէ. «Կորուսից զիմաստութիւն իմասանոց և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից» (Ս. Կոր. Ա.), «ցրուեց ամբարտաւանները» որոնք կ'ըսէին. «Մի՛ թէ իշխաններէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատաց անոր. այլ միայն ան խաթանո՞ք ամբողջ, որ ոչ զիսէ 20-ՐէնՍ, ու նզովեալ են.» մինչդեռ, ընդհակառակն, Աստուած այս խաթանո՞ք ամբողջ, որ Աստուծոյ օրէնքը զիսէ, «բարձրացուց», որ «բարձր առնէ զտառապետս յաղբեւոց. նստուցանէ գնոսա իշխանս»:


Բ. Այսչափը իբրեւ Քրիստոնեայ: Իսկ եթէ մարդկօրէն կամ իբր ոչ քրիստոնեայ խորհելով կ'արհամարհեն, նախ իրաւունք չունին խօսելու, զի միայն Կաթողիկէայք և ճշմարիտ Կաթողիկէայք կրնան խօսիլ մեր զխաւածին մէջ: Երկրորդ, ուրեմն իրենց նաւիրական սկզբունքներուն իսկ կը դրժեն: Իրենք և իրենց համախոհ կամ փառաբանիչ աշխատանքները չեն միթէ որ կը պաշտպանեն ժողովրդապետականութիւնը կամ ռամբարտութիւնը (démocratie), սինդրորութիւնը (prolétariat) զրկեաները, գործաւորները... ընկերվարականներ'! Ամօթ իրենց, որ իրենց այս պաշտպանեանները աշխարհ կծու մակդիրներով կը նախատեն. ինչո՞ւ կը մոռնան իրենց կոչումը, կամ թէ արդեօք խելճին ու թշուառին պանծացեալ իսկ փաստաբանութիւնը սոսկ կեղծաւորութիւն է, և ռամբարտ պաշտպանելու պատրուակին ներքեւ երկրորդական կամ յետին զիտումներ կը ծածկուին արդեօք...: Ծշմարիտ ժողովրդասիրութիւն անբաժան է ճշմարիտ կրօնասիրութենէն: Դեռ անցեալ օրերն էր Բարիզում, քսաներորդ դարու լուսաւորեալ աշխարհին ամենալուսաւորեալ մայրաքաղաքին մէջ, զրկեալ դատակարգերու ընկերութեան գումարումի մը նախագահեց վսեմ. Ծիրանաւորն Ամէթ, նոյն քաղաքին Արքեպիսկոպոսը: Հոն խմբուած էին բարիզեան առաջնակարգ դատակարգէն մեծամեծ տիկնայք և տեսարք, ամէնքը թունդ կաթողիկէ. հոն փառաւոր ճառ խօսեցաւ Գաղղիոյ զերահօշակ ճարտասաններէն Կոմս Տը Մէօն, գործաւորներուն ի պաշտպանութիւն կատարուած մեծամեծ զոհողութիւններն համբերով, հոն խօսեցան ուրիշ մեծ մարդիկ, և կարգինալ Ամէթ բանախօսութիւն մը արտասանելով, սա երեւելի բառն ըսաւ, «Կը տենչամ անուանուիլ Գործագործներո՞ւ Կարդէնալը»: Ըսաւ նաև թէ Ս. Քահանայապետը զինքն խրախուսած էր զբաղելու աշխատաւորներով, և յորդորեց

գործաւորները որպէսզի թէ՛ արհեստի և թէ՛ մանաւանդ քրիստոնէութեան տեսակէտով գովելի և օրինակելի ըլլան: Ապա այս խումբը ամբողջովին գնաց Ս. Սիրտ եկեղեցին, աղօթելու, նուիրուելու հոն. Գաղղիոյ եկեղեցական ամենամիտ բեմբասուցը՝ Արհի. Թուչէ Եպ. հիւանալի ճառ մը խօսեցաւ, սրտաշարժ և վարդապետական. ցոյց տուաւ ժողովրդական Սառստնը որ մասնուած ու բանաւորած է, և կը սպառնայ ընկերային շէնքին սիւնները տապալել. պէտք է գալ Աւետարանին, Յիսուսի Քրիստոսի վարդապետութեան սկզբունքներուն. սկզբունքներ արդարութեան, բարեպաշտութեան, մարդկային արժանապատուութեան. և աւարանց գոչելով. «Աշխատեցէ՛ք, ու գործաւորներ, այս աշխատութիւնը Եկեղեցւոյ պատուոյն համար է. աշխատեցէ՛ք, այս աշխատութիւնը ձեր եղբարց բարւոյն համար է. աշխատեցէ՛ք, այս աշխատութիւնը հայրենիքի խաղաղութեան համար է: Ինձ կը թուի թէ այս դատը չատ գեղեցիկ է. այս դատին զոհեցէք զձեզ, ինքզինքնիդ Յիսուսի Ս. Սիրտին գոչելով: Ասիկայ այնպիսի դատերէն մէկն է, որոնց համար մարդ կու տայ իր բոլոր արիւնը, ինչպէս կը տրուի ջրոյ կաթիլ մը»:

Գ. Վերջապէս հարկ կը դրանք ըսելու որ ընդգլխադէպ մեր եղբարքը կրնան վտանգ ըլլալ որ իրենց չափ ազնուական ելող կաթողիկէնայք եւս չատ կան որ կատարուած դատաւարտելի ծայրայեղութիւնները և Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ սկզբունց դէմ կը դնեն: Բայց չեն զիջանլի ստորին ցոյցերով և խալտաւորութեամբ պատասխանել: Հատարակութեանս և մանաւանդ մեր եկեղեցիներուն պատիւը պահպանելու դատը՝ իբրեւ ստորին նախատուած դատաւարութիւն կու տայ, առանց ստորին ցոյցեր ընելու ինչպէս իր պարտքն է չընել բնաւ:

Դ. Վերջին գիտողութիւն մ'ալ, և կը բաւէ: Հաւատացեալները ուղղութեան իրենց օրինաւոր Պատրիարքին և մանաւանդ Սրբազան Քահանայապետին հնազանդութեան և սրբազան սկզբունքներու պաշտպանութեան յորդորողներն ի՛նչ իրաւունքով «Գրգռող» պիտի անուանուին արդեօք: Գրգռող անոնք են, որ սուտ հրատարակութիւններով, յօդուածներով, խօսքով, ճառերով և գործքով կը համոզեն չհնազանդելու եկեղեցական իշխանութեան, անարդելու զայն, պղծելու եկեղեցւոյ սրբութիւնը, Սրբազան Քահանայապետին խրատներն ալ տու ոչինչ գրելու. անոնք են գրգռող, որոնք գտւաւները ոտք հանելու ամէն միջոց կը գործածեն, և իրենց եպիսկոպոսն պատուով ընդունողները կ'այսպէս են և կը մեղադրեն, և իրենց օրինաւոր պետին հնազանդողները, Կաթողիկէի եկեղեցական կանոնաց սկզբունքները պաշտպանողները կը նախաան: Պէտք է գիտնալ որ անչէ խնդիր չկայ, այլ «Կրօն»-ի. անձը կրնայ սխալի, բայց սկզբունքը անյեղի է. Կաթողիկէ՝ Եկեղեցին իր սկզբունքները չիզոհեր մէկու մը համար, բնաւ, ըլլայ պետութիւն, ըլլայ

հասարակութիւն, ըլլայ սոսկական ոք: Օրինաւոր իշխանութիւնը պէտք է ճանչնալ և յարգել, և օրէնս—որ է, երբ ճանչցուած է Ս. Աթոռէն: Ահա Կաթողիկէ կրօնքին անփոփոխելի մէկ սկզբունքը: Ահա ճշմարիտ Կաթողիկէի սրբազան մէկ պարտքը:



Գ Ի Տ Ո Ւ Ն ՈՒ Ք Ր Ի Ս Տ Ո Ն Ե Ա Յ

Վերջերս Մօնթօպանի մէջ (Ֆրանսա) կը մեռնէր համալսարանի ամէնէն փայլուն բրօֆէսէօրներէն մին՝ Մ. Բագիէ, Թուրուզի գիտութեանց ֆազիւլթէի երկրարանութեան ուսուցիչը:

Ասի երբ զգաց իր վախճանին մօտալուս ըլլալը, շնորհակալութեամբ ընդունեցաւ բարեկամ քահանայի մը այցելութիւնը՝ որ եկած էր Խօսելու Աստուծոյ և յաւիտենականութեան պատրաստուելու պէտքին վրայ:

— Այս ծանր վայրկեանին ո՛ր եւ է դժուարութիւն մ'ունի՞ք արդեօք, հարցուց քահանան, ձեր քրիստոնէի պարտքը չկատարելու:

— Ո՛չ մէկ դժուարութիւն, պատասխանեց ան:

— Ո՛ր եւ է մէկ առարկութիւն մըն ալ չունի՞ք, յարեց քահանան, կաթողիկէ հաւատքին դէմ:

— Եւ ո՛չ մէկ առարկութիւն, ըսաւ ան, զի թէ՛ իմ ուսումնասիրութիւններուս և թէ՛ աշխատութեանցս պահուն ամենեւին կասկած մը անգամ չեմ ունեցած:— Դուք ըսաւ քահանան, երկար ատեն զբաղած էք յեղաշրջման վարկածով, արդ, չէ՞ք նշմարած ո՛ր եւ է անհամաձայնութիւն մը կրօնքի և գիտութեան միջև:— Ո՛չ, և ով որ այսպիսի անհամաձայնութեան մը գոյութիւնը կ'ինծադրէ, արդեօք վստահ է: Եթէ կայ յեղաշրջութեան մէջ բան մը, զոր այնպիսիներ հակառակ կը գտնեն հաւատքի, իմ կարծիքովս սա պատճառաւ է որ անոնք ոչ գիտութենէ լուր ունին և ո՛չ ալ կրօնքէ:

Մ. Բագիէ իր մեռնելէն 15֊ օր առաջ, բոլորովին ինքզինք տուած էր հաւատքի արտփարար ու կենսաստու մատուցաներուն, և իր հիանալի համակամութեամբ կը չինէր իր շուրջինները, ամէն օր կարդալ տալով հասակոտորներ Նմանութիւն Յիսուսի Քրիստոսի գրքոյկէն, և յայտարարելով թէ բնա՛ւ այսքան երջանիկ չէր եղած, որքան կ'զգար այժմ ինքզինք Աստուծոյ բոլորանուէր տալէն ի վեր:

Անօգուտ չէր այս նոր օրինակը անգամ մըն ալ հաստատելու Բագիէի խօսքը. «Քիչ գիտութիւն կը հեռացնէ Աստուծմէ, շատ գիտութիւն անոր կը մերձեցնէ:»



Հ. Ռ. Ս. Մ.

մի էր: Վիեննայի կայսերական շրջանակից մէջ մտն գտնուող էր Լուսնային
* * Արհի. Ռաֆ. Սգարինէլի Արքեպիսկոպոսն, որ բարձրաստիճան պաշտօնեայ
մըն էր Վատիկանու Արտարին գործոց քարտուղարութեան պաշտօնատան մէջ, Բահանա-
ապետական Դեսպան (Nuncio) կարգուեցաւ ի Վիեննա: Շնորհաւորելի ընտրութիւն
մըն է, զի այս փափկակեցաւ, կարող էր քաջոշիւմ անձնաւորութիւնը պատուաւոր կերպով
պիտի ներկայացնէ Ս. Աթոռը Աւստրիոյ Պետութեան մօտ: Արդէն ժամանակ մը իբր
քարտուղար պաշտօնավարած էր Բահանայապետական Դեսպանատան մէջ ի Վիեննա
ուր ծանօթ է իր դէմքը եւ համակրուած:

* Հետեւեալ՝ ուխտագնացութիւնները պիտի կատարուին ի Հոռոմ: Մարտի մէջ Վիեննայէն ընդ նախագահութեամբ կարգ. Արքեպիսկոպոս Նալիկ: Ապրիլի մէջ Գերմանիայէն, առաջնորդութեամբ Գօլցնիայի կարգ. Արքեպիսկոպոս Ֆիշըրի: Մայիսի մէջ Ամսթրիկայէն եւ Ֆրիպուրկէն:

ᄃ ᄆ. ᄇ. ᄈ. ᄉ. ᄊ. ᄋ. ᄌ. ᄍ. ᄎ. ᄏ. ᄐ. ᄑ. ᄒ. ᄓ. ᄔ. ᄕ

ԲՆԴԱՎԱՐՈՒՄ.— Կրօնական հալածանքը կը շարունակուի ամենայն խստութեամբ։
Նոր հասարակագետութեան անկրօն օրինակներն համաձայն։ Լիզպոնայի արժանաւոր
Պատրիարքը եւ ուրիշ նպիսկողութիւն մը արտաքրտեցան իրենց թեմերէն, անոր համար
որ իրենց ժողովրդեան պարզեցին թէ «Պաշտամանց ընկերութիւն» կոչուած ժողովներն
այսօրինաբար են։ Պատրիարքին մեկնումի պահուն ութ հազարէ աւելի բազմութիւն մը
խռնուած էր կայարանին մէջ ողջերթ մաղթելու համար բազմաթիւ էին ասոնց մէջ բարձ-
րաստիճան անձինք, որոնցմէ շատեր ձերբակալուեցան իրենց հոգեւոր Պետին հանդէպ
ցոյց տուած պարտաճանաչ մեծարանաց համար։ Իսկ կառավարութիւնը ստիպեց գծ-
ցող պիսկողութիւնը որոշած ժամէն առաջ մեկնիլ, ցոյցներն արգիլելու համար, մեկնումէն վերջը
պիսկողութիւնը որոշած ժամէն առաջ մեկնիլ, ցոյցներն արգիլելու համար, մեկնումէն վերջը
պիսկողութիւնը որոշած ժամէն առաջ մեկնիլ, ցոյցներն արգիլելու համար, մեկնումէն վերջը
պիսկողութիւնը որոշած ժամէն առաջ մեկնիլ, ցոյցներն արգիլելու համար, մեկնումէն վերջը
պիսկողութիւնը որոշած ժամէն առաջ մեկնիլ, ցոյցներն արգիլելու համար, մեկնումէն վերջը

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ

* * Կ. Պոլսոյ Աւագ Թեմին Կղերանոցը, որուն իր Պատրիարքութեան առաջին օրէն փափարող էր Նորին Գերերջանկութիւնը, բացուեցաւ շարաթ մը յառաջ: Անոր մեծաւոր կարգուեցաւ Գերը, Ստեփանն Ի. Վ. Բաղնունի եւ Փոխան-Մեծաւոր Դեր. Յովսէփ Վ.

ձամճեան: Սաները պիտի հետեւին Ս. Գր. Լուսաւորիչ Ուսումնարանի, Լիկէական դասերուն մինչեւ ցփիլիսոփայութիւն:

* Ամենապ. Կ. Պատրիարքը ձեռնարկեց նաեւ «Դպրաց Դաս»ի մը կազմակերպութեան, որ յիրաւի յոյժ փափարելի դարձած էր շատոնց: Առ այս յարմարութիւն ունեցող տղայք ձգի պիտի աշակերտին Ս. Գրիգ. Լուս. Ուսումնարանին եւ իրենց դպրոցական պիտոյքն եւ զգեստն եւս ձրի պիտի մատակարարուի: Քաջ ուսուցիչ մը երգեցողութեան դասը պիտի աւանդէ:

* Ի Հռովմ գտնուող Լեւոնեան Հայ Դպրոցին Մեծաւոր անուանուեցաւ Գեր. Յովսէփ Վ. Մօմճեան, Սերաստիոյ թեմէն: Մօտերս Կ'ուզեալորի դէպ ի Հռովմ: Առաքինի վարդապետին կը շնորհաւորենք իր այս կարեւոր պաշտօնը:

* Թիֆլիզի Հայ Կաթողիկէ ժողովուրդը ցարդ ուրոյն աղօթատեղի չունենալով լատին եկեղեցիները կը յաճախէր: Այժմ ունին իրենց սեփական մատուռը՝ նորակառոյց. ուր առաջին անգամ ըլլալով այս Ս. Եննիեան ժամերգութիւն եւ Զայնաւոր Պատարագ մատուցուեցաւ Հայկական ծէսով: Թիֆլիզի Հայ Կաթողիկէայք խանդավառ են իրենց վիճակած այս բախտին համար եւ շնորհակալութեամբ զեղուն Ուրաքիական կառավարիչ Գեր. Սարգիս Գերապայձառ Տէր-Աբրահամեանի հանդէպ որ զուլս կանգնեցաւ նման ձեռնարկի մը:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

* Նահանգային կանոնադրին համաձայն Իւրիւ-Միւլ-Էնբրու ընտրութեանց համար կառավարութիւնը հրահանգ զրկած ըլլալով տարրեր տեղեր, Գում Դարուի Պատրիարքարանը այս հրամանը հակառակ գտնելով Պատրիարքարաններու Առանձնաշնորհմանց, որոշած է պէտք եղած տեղերը դիմումներ կատարել:

* Առաջիկայ Խորհրդարանական ընտրութեանց համար Համագգային ժողովը իր նիստը գումարեց Բերա նապեան վարժարանի սրահին մէջ. միայն բողոքական ներկայացուցիչներ չէին եկած: Առաջին վայրկեանէն իսկ ծայր տուած է անհամերաշխութիւնը: Ազգը ամբողջ կրնայ ընդունիլ արդեօք այս ժողովին հրահանգները կամ թելադրութիւնները: Խնդիրը բարդ չ'երեւիր, բայց իցի՛ւ թէ պառակտումը աղիտաբեր չլլայ ընդհանրութեան, վնասաբեր ըլլալով ընտրութիւններու:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

* Օսմ. կառավարութիւնը վերսկսաւ Անգլիոյ հետ իր բանակցութիւնները Պաղտատու գծին մինչեւ Քովէյթ երկարացուելուն ու նաւահանգստի շինութեան մասին: Այս խնդրոյն հետ պիտի կարգադրուին նաեւ մարսերու հարիւրին չորս յաւելումը, օտարներու եւս թէմէթթիւի տուրքին ենթարկուիլը, եւ ուրիշ քանի մը առկախ խնդիրներ:

* Սուլթանը նժոյգ մը նուիրած էր իշխան Պօրխալ՝ չափահասութեան հանդէսներուն առթիւ, զոր անծամբ նուիրած է անոր հարիւրապետ Թահսին պէյ: Օսմանեան պատուիրակութիւնը մեծ պատիւներով ընդունուած է կայարանին մէջ:

* Անաստուր երթալիք քննիչ մարմինը կը հաւաստուի թէ մէկ երկու շաբաթէն ճամբայ պիտի ելլէ:

* Պատերազմական Նախարարութիւնը պաշտօնապէս կը հաղորդէ՝ թէ Յունուար 215էն մինչեւ 10123 մեծ ճակատամարտներ տեղի ունեցած են Պէնկագիի մէջ Իտալացւոց դէմ: Թշնամոյն կորուստը 1,300 մեռեալ կը հաշուուի, մինչ Օսմ. պատերազմիկներէն 30 մեռեալ եւ 80 վիրաւոր միայն կայ:

* * Պէտք է զգուշանալ ինչպէս վերցնելու եւ քաղաքական բանտարկեալներու շատ քիչ բացառութեամբ ընդհանուր ներում շնորհելու մասին, այս պահուս մասնաւոր յանձնաժողով մը կազմուած է, որ խնդրոյն մանրամասնութիւններն ուսումնասիրէ, եւ կայս. իրատէն առնուի խորհրդարանի բացումէն առաջ:

* * Անցեալները նշանակալից տեսակցութիւն մը տեղի ունեցաւ Պուլկարիոյ դեսպան Մ. Սարաֆովի եւ Յունաց Ամեն. պատրիարք Յովակիմ Դ.ի միջեւ: Երկու ազգերու համերաշխութեամբ գործելու եւ նոյն իսկ ծանօթ հերձուածը վերցնելու վրայ դարձաւ խոսակցութիւնը, որ շատ սիրալիր եղաւ: Մեծ արդիւնք կը սպասուի այս տեսակցութենէն:

* * Հրէի Խեւեհեհե, Խայիմ Նաում էֆ. իր հրաժարականը տուած է Բ Դրան՝ անոր կցելով նաեւ բացատրական գիր մը, եւ [Հրեայ հասարակութեան Ազգ. ժողովին, առարկելով թէ «հասարակութեան գործերը չպիտի կարենայ վարել գործադրութեան մէջ եղող արդի կանոններու համաձայն»: Իր գլխաւոր զանգատն այն է թէ Բաղադարական ժողովն առանց իրեն հարցնելու տրամադրութիւն մը առած է էջքէնազիմ կոչուած Գերման Հրէից նկատմամբ: Թէեւ ժողովը շատ խնդրեց որ հրաժարականը ետ առնու, նոյն իսկ իր ուզածը կատարելու խօսք տալով, սակայն խախտմամբ անդրդուելի մնաց, եւ կառավարութեան եւս մատոյց իր հրաժարականը: Բայց կառավարութիւնը չուզեց զայն ընդունիլ, ազդարարելով որ շարունակէ իր հասարակութիւնը վարել ըստ օրինաց եւ ըստ իր իրաւանց եւ պատասխանատուութեան: Խայիմ Նաում էֆ. յայտարարած է իր Խեւեհեհի խմբաբազմութիւնը թէ. իր հրաժարիլ ուզելուն պատճառը սկզբունքի եւ իրաւաբանութեան խնդրոյ մը դէմ եղած ունեւորութիւններու համար է: Զի Հրէից ժողովը առանց իր հաւանութեան եւ տեղեկութեան, կ'ուզէ եղեր ինչ ինչ որոշումներ առնուլ եւ գործադրել տալ զանոնք, ինչ որ հակառակ է ներքին կանոնադրութեանց եւ կառավարութեան ու ազգին հանդէպ իր ստանձնած պատասխանատուութեան:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Կ Ե Ա Ն Ք

Յիւլիոս Նոր Դահլիճը կազմուեցաւ վերջապէս այնպիսի տարրերէ՝ որոնց ձեռն-հասութիւնը, երկարժամանակեայ փորձառութիւնն ու փայլուն դիւանագիտական անցնայը կը խոստանան պատմութեան մէջ աննախընթաց եղած էջ մը բանալու: Սոյն դահլիճին կարկառուն դէմքերն են, Մ. Բաւեհեհե՝ Վարչապետ եւ Արտարիւն գործոց նախարար. Մ. Պէտք է Դատական, Մ. Միլեհե՝ Պատերազմական. Մ. Տէյլեհե՝ ծովային. Մ. Ժ. Տիւրեհե՝ Հանրօգուտ շինութեանց. Մ. Լեհ. Պաշտպանական եւ կանխատեսութեան:

* * Իտալական թորիկականները վերջերս գերի բռնած էին Մարսիլիայէ Թու-նուզ գնացող Ֆրանսական Գարթաժ եւ Մանուպա նաւերը իրր թէ պատերազմական նիւթեր եւ ծպտեալ սպաներ կը փոխադրէին անոնք ու նաւերը ազատ թողնու վար դրած էին 29 ուղեւորներ Կարմիր Մահիկի անդամներէն, այժմ ասոնք ալ ազատ թողնուած են Ֆրանսական կառավարութեան բռնուն միջամտութեան շնորհիւ: Օսմանեան կառավարութիւնը շնորհակալութիւն յայտնեց Ֆրանսայի:

* * Մարօքի նկատմամբ կնքուած Տրէպէ Ե-Գիւլեհ պայմանագրութիւնը հակառակ Մ. Բիշօնի քննադատութեան, քուէարկուեցաւ Փետրուար 10ին (Ն. Տ.) Ֆրանսական ժողովոյտին մէջ 42ի դէմ 212 ձայնով:

* * Անգլիոյ արքայական ամուրը Հնդկաստանի ծամբորդութենէ վերադարձաւ եւ ամենայն փառաւորութեամբ ընդունուեցաւ ի Լոնտրա: Նշանակելի դէպք մը եղաւ Գաղղիոյ կողմանէ ցոյց տրուած յարգութիւնը որ յատկապէս զբաղաւորներ խրկեց ի Մալթա որջուներու համար բարեկամ եւ զրացի մեծ ժողովրդեան Վեհապետները: Անգլիացի մեծապէս զոհ եւ շնորհապարտ մնացին:

* * Զինատանի մէջ յեղափոխական շարժումը մեծ համեմատութիւններ կ'առնու։ 17 զաւառներ յարեցան հանրապետութեան որուն նախագահ եղաւ Սունեանցէ։ Մանչու զօրքն ու բնակչութիւնը միացած են Զինացիներուն։ Մայր Կայսրուհին, Կ'ըսուի թէ, հաւանած է քաշուիլ։ Բէքինի մէջ Կայսրութիւնը շատ ծանր է։ Նախկին յեղափոխականները վերջնագիր մը զրկելով եուվան շի Բայի արգիլեցին՝ Թագաւորին զահէն հրաժարելու պարագային՝ առժամանակեայ կառավարութիւն մը հիմնել։ Եուն շի Բայի դէմ մահափորձ մը կատարուեցաւ արքայական ընտանիքի իշխաններէն մէկին կողմէն։ Պօմպա նետող երեք զինուորները կոփուեցան։ Հիմա Կ'սպասուի Կայսերական հրաժարման Կայսրը պիտի պահէ իր տիտղոսները եւ եկամուտները։

* * Դրական աշխարհը մեծ սուգ մ'ունեցաւ յանձին Բիէր Բիյառ բանաստեղծին։ Ասի ծնած էր ի Բարիզ 1864 յուլիո 14ին։ 1892ի մէջ երջանկայիշատակ Կաթողիկոս Պատրիարք Ազարեան զանի Պոլիս կանչեց իր նորահաստատ Ս. Դրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանի Ռէթօրիքի ճիւղին համար, մասնաւոր յանձնարարութեամբ նշանաւոր Դրավաճառ-Հրատարակիչ Մ. Տըլակրավի։ Հանգուցեալն իր առանձին յարկաբաժինն ունէր Ուսումնարանի շէնքին մէջ իսկ։ Միջազգային համբաւ մը ունէր Մ. Բ. Բիյառ եւ որ մեծ բաժին մը ունի ամէն հայու սրտի մէջ ալ, Հայկական կոտորածներու միջոցին իր ջերմ վերաբերումին պատճառաւ։ Հիմնած էր Բրօ Արմէնիա հանդէսն ալ զոր բացարձակապէս նուիրած էր հայկական դատին պաշտպանութեան։ Իր մահը յանկարծակի եղաւ սրտի կաթուածէ, հազիւ 48 տարին լրացուցած։

* * Պուլկարիոյ զահաժառանգ իշխան Պորիսի չափահասութեան հանդէսները մեծ փառաւորութեամբ կատարուեցան. Վեհափառ Սուլթանին ինքնատիր նամակն առ Ֆէրտինան թագաւոր մեծ ազդեցութիւն գործեց։ Դահաժառանգ իշխանն զգաժուած շնորհակալութիւն յայտնեց օսմ. Կայսեր կողմանէ իրեն նուիրուած նժոյգին համար։ Եւրոպական Տէրութեանց ուշադրութիւնը գրաւեց Պալքանական Տէրութիւններուն այս առթիւ սիրալիր վերաբերումը։

* * Սեւ լեռան Նիքիթա թագաւորը որ Բեթերսպուրկ գնացած էր, հոն շատ սիրալիր ընդունելութիւն գտած է Ռուսիոյ Արքունեաց կողմէ։

* * Անգղիա եւ Ռուսիա այլեւս իրենց ազդեցութեան շրջանակները կ'որոշեն Պարսկաստանի մէջ, ուր Ռուսիա մանաւանդ բաւական զօրք ալ ունի։ Այս երկու պետութեանց կուսակից նոր Դահլիճ մընտրուելու վրայ է։ Իսկ նախկին Շահը իր մարդիկներովն պիտի մեկնի Պարսիկ հողէն եւ պիտի ստանայ թոշակ։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կաթողիկոսական կոնգակ	17
Կարդինալաժողովը (Consistoire)	21
Մակդիւնեւոյ պէտք չէ խաղալ	25
Դիսուն ու Քրիստոնեայ	28
Տեղեկագրականք	29

Ա Ր Տ Օ Մ Տ Է Ր
ՅՈՎԷ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՃՈՐԷՆ-ՆԱՄՐԱԳՐԱՎԵՍ
ԳԷՈՐԳ Ծ. ՎՐԴ. ԹԷՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Ռ. ՍՍ.ԴԱՍԱՆ

Կալաքա Քուրճունլու խան

